(դրախտաբնակ) եւ "Մեծ„ մականուան է արժանացել։ Դեռ հէքեաթներից գիտենք, թէ ինչպէս Շահաբասը գիշերները ծպտեալ իր վէզիրների հետ շրջում էր քաղաքներն եւ գիւղերը՝ ժողովրդի վիճակին վերահասու լինելու համար, ինչպէս անում էր Հարուն-էլ-Ռաշիդը իր ջաֆար վէզիրի հետ։ Սակայն Առաքել վարդապետը նկարագրում է Նրան բոլորովին այլ գոյներով, իբրեւ "անդնդային վիշապ, օձի բնաւորութիւն ունեցող, իբրեւ մի աշխարհաւեր եւ բռնակալ մարդ եւ խիստ ֆանատիկ մահմետական ու հալածող քրիստոնէութեան։„ Ներկայ դէպքում մի քիչ սկեպտօրէն պէտք է վերաբերուել թէ՛ Առաքել վարդապետի եւ թէ՛ մահմետական պատմագիրների կարծիքին. առաջինը՝ հայ ազգին հասած աղէտների պատճառով կարող է դառնացած լինել Շահաբասի դէմ եւ հետեւաբար ոչ անաչառ, իսկ մահմետական պատմագիրները՝ ոգեւորուած լինելով կրօնական զգացումներով, նոյնպէս չեն կարող անաչառ պատմիչ հանդիսանալ եւ միակ այն հանգամանքը, որ Շահաբաս ջարդել եւ կոտորել է գեաւուրներին, բաւական է մոռացընել տալու Նրա բոլոր պակասութիւնները։ Դիմենք ուրեմն նաեւ ուրիշ պատմագիրների։

Մի նոր պարսիկ պատմաբան, որի երկասիրութիւնները դեռ անյայտ են մնացած, բայց որին կարելի է կատարելապէս հաւատ ընծայել, որովհետեւ նա իր խօսքերն հիմնում է դիւա-